

Լրատու

Թիւ 6 (Բացառիկ)
Դեկտեմբեր 2007

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի



Սիրելի հայրենակիցներ,

Այս տարուայ վերջին եռամսեան եղաւ բացառիկ յաշողութիւններով լեցուն ու արդիւնաւետ շրջան մը այն իմաստով, որ արձանագրուեցան նշանակալից իրազործումներ եւ բարեփոխութիւններ ի նպաստ Կիպրահայութեան:

Զանի մը առիթներով, խօսքերուս մէջ անդրադարձած էի գործելածելիս եւ շեշտած էի թէ «պիտի աշխատիմ ծառայել եւ գործել ի շահ Կիպրահայութեան ընդհանրական շահերուն, զայն վեր դասելով անհատական շահեռ»:

Վերոյիշեալ սկզբունքն մեկնելով, առաջին հարցը, որ ընտրութենես անմիջապէս ետք գործի անցնելով նպատակադարձ էի լուծել, «Լիտրա Բալասի»ի հայկական հին գերեզմանատան տիսուր եւ անմիջար վիճակն եր, որ քանի մը տարիէ ի վեր, հրատապ նիւթ դառնալով,

տեղ գրաւած էր ոչ միայն հայկական եւ տեղական մամուլի Եջերուն մէջ, այլ նաեւ իրարամերժ տրամադրութիւններ ստեղծած մէր գաղութի բոլոր խաւերուն մօս: Երկար ու յարատեւ հետապնդումներէ ետք, Յոկտեմբերի մէջ զիս տեղեակ պահեցին թէ Կիպրոսի բարեխնամ կառավարութիւնը Վաերացուցած է 90,000 Կիպրական Ոսկիի յատկացում կատարելու որոշումը, Վերակառուցելու համար կիսաքանդ վիճակի մէջ գտնուող մէր գերեզմանատունը: Ներքին Գործոց Նախարարութենէն ստացուած 12 Նոյեմբեր 2007 թուակիր նամակը պաշտօնապէս կը հաստատէ վերոյիշեալ յատկացումը, ընդգծելով թէ գումարը պիտի տրուի Երկու մասով՝ իրաքանչիւրը 45,000 Կիպրական Ոսկիի չափով:

Երկրորդ հարցը, որ դարձեալ կարեւոր կը նկատէի, կառավարութեան կողմէ մէր Եկեղեցւոյ յատկացուած տարեկան նպաստի բարելաւումն էր: Ըստ Վերջին յաւելումին, որ տրուած էր 1998 թուականին, մէր Եկեղեցին կը ստանար 25,000 Կիպրական Ոսկիի օժանդակութիւն, հակառակ Վերջին տարիներու կեանքի սղաճին: Յարատեւ տեսակցութիւններէ եւ պնդումներէ ետք, Նոյեմբեր 29ին տեղեկացայ, թէ յետ այսու այդ գումարը պիտի կրէ 40% յաւելում եւ յատկացումը պիտի ըլլայ 35,000 Կիպրական Ոսկի:

Երրորդ. Կիրակի, 6 Յունուար 2008Էն սկսեալ, պաշտօնապէս պիտի գործէ Կիպրահայ Յամայսքի կայքէջը, շնորհիւ Կիպրոսի Յանրապետութեան 5,000 Կիպրական Ոսկիի Նիւթական օժանդակութեան: Ներփակուած թղթիկով Ձեզ տեղեակ կը պահենք կայքէջի մանրամասնութիւններուն մասին:

Ինչպէս բոլորդ ականատես եղաք, Յոկտեմբեր 6ին եւ 7ին, աննախընթաց Երկու Ելոյթներով, Կիպրահայութիւնը առիթը ունեցաւ վայելելու «Արեւիկ» մանկապատա-

Նեկան համոյթի Ներկայացումները, որոնք կազմակերպուած էին Երեսփոխանական Գրասենեակի Մշակութային Յանձնախումբին նախաձեռնութեամբ: Մանրամասնութիւններն ու նկարները տեսնել «Լրատու»ի յաջորդ Եջերուն մեջ:

Գալով Կիպրոս բնակութիւն հաստատած մեր Յայաստանցի հայրենակիցներու անցագրի հարցերուն, ինչպէս փոխանցած էինք «Լրատու»ի 2-րդ թիւով, Երեսփոխանական Գրասենեակը ստանձնած էր նաեւ այս պարտականութիւնը, դիւրացնելու համար անոնց կեանքը: Մեր նախաձեռնութեամբ եւ Յայաստանի Յանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի արտակարգ եւ լիազօր դեսպան Պրև. Վահրամ Կաժոյեանի համամտութեամբ, յարմար նկատուեցաւ դեսպանատան Յիւպատոսի պարբերական այցելութիւնը Կիպրոս, որ առաջին անգամ ըլլալով տեղի պիտի ունենայ 31 Յունուար 2008-ն մինչեւ 2 Փետրուար 2008, մեր գրասենեակեն ներս: Յաւելեալ մանրամասնութիւններու եւ ժամադրութիւն ապահովելու համար կը ինդրուի կարդալ Ներփակուած յայտարարութիւնը:

Խօսքիս Վերջաւորութեան, Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի գոյգ տօներուն առիթով, սրտանց կը շնորհաւորեմ Ձեզ, մաղթելով, որ 2008 թուականը բոլորիդ համար ըլլայ առողջութեան եւ փափաքներու իրականացումի, իսկ մեր Մայր Յայրենիքին ու ժողովուրդին համար՝ նոր նուաճումներու, յաղթանակներու եւ վերելքի տարի մը:

**Կարդգես Մահտեսեան
Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ**

ԵՌԱՄՍԵՎՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Քաղաքացիական հարցեր եւ կեցութիւն

Մեր գրասենեակի աշխատանքները մասնաւրաբար կեղոյնացած են քաղաքացիական հարցերու եւ կեցութեան արտօնագիրներ ապահովելու վրայ: Սակայն, դժուարութիւններ ստեղծուեցան այն պարագաներուն, երբ կեցութեան ժամկետի աւարտեն առաջ նորոգութեան դիմումները ժամանակին չեին կատարուած: Հետեւաբար, անգամ մը եւս կը յանձնարարենք, որ մեր հայրենակիցները բժախսնիր ըլլան եւ իրենց կեցութեան արտօնագիրները նորոգելու համար դիմում կատարեն նուազագոյնը ժամկետի լրացման թուականեն 15 օր առաջ:

Քաղաքացիութեան համար դիմում կատարած անհատները նոյնպէս պարտաւոր են նորոգել իրենց կեցութեան արտօնագիրները, անկախաբար իրենց տրուելիք դրական կամ մերժողական պատասխանեն: Ինքնաբերաբար ապօրինի կը նկատուի մերժում ստացած անհատներուն կեցութիւնը, որոնք ժամանակին թերացած են նորոգելու իրենց կեցութեան արտօնագիրը:

Այն անհատները, որոնք աշխատանքային համաձայնագրով (Employment Contract) բնակութիւն հաստատած են Կիպրոսին ներս, համաձայնագրի լրացման թուականեն նուազագոյնը երկու ամիս առաջ, պարտին իրենց գործատերերուն միջոցաւ դիմում կատարել աշխատանքային գրասենեակ (Labour Office), Ասխ՝ աշխատակի հրաման ապահովելու եւ ապա աշխատանքային համաձայնագիրը վաերացնելու համար: Միայն վերոյիշեալ գործողութիւնները աւարտելէ ետք կրնան դիմում կատարել Օտարահպատակներու եւ Ներգաղթի բա-

ժանմունք (Aliens & Immigration Unit), կեցութեան եւ աշխատանքային արտօնագիր ստանալու համար:

Հպատակութիւն

Հպատակութեան դիմումներուն գծով շատ լուրջ եւ հետեւողական աշխատանք կը տարուի Պետական Ներկայացուցիչին կողմէ: Ան շաբաթական հանդիպումներով կը հետապնդէ մի քանի տարիէ ի վեր դիմում կատարողներուն հարցերը, յուսալով թէ մօտ ապագային ամբողջական փաստաթուղթեր եւ օրինաւոր նկատուած թղղթածրարներ ունեցողներուն դրական պատասխան պիտի տրուի: Տեղին է նշել թէ, Ներկայ պայմաններուն տակ, հպատակութեան դիմում մը կը կարօտի մօտ 2-3 տարի:

«Արեւիկ» Մանկապատանեկան Յամոյթ

Երեսփոխանական Գրասենեակի Մշակութային Յանձնախումբը մեծ յաջողութեամբ իրականացուց «Արեւիկ» Մանկապատանեկան Յամոյթի երկու ելոյթներ, որոնք տեղի ունեցան Շաբաթ, 6 եւ Կիրակի, 7 Յոկտեմբերին, Նիկոսիոյ Ստրովոլոս Քաղաքապետարանի շքեղ հանդիսարարին մէց:

Յաջորդական ելոյթներուն ներկայ գտնուեցան Յայ թէ Յոյն պատկառելի անձնաւորութիւններ եւ դեսպաններ: Կիպրահայութեան մասնակցութիւնը, առաջին անգամ ըլլալով, մրցանիշ մը արձանագրեց, աւելի քան 1,200 հանդիսատեսներու ներկայութեամբ:

«Արեւիկ» համոյթը, Շաբաթ օրուայ ելոյթն ետք հիւրասիրուեցաւ Վարդգէս եւ Մակի Մահտեսեաններու թնակարանին մէջ, ուր անոնք մօտեն առնչուեցան եւ ծանօթացան կազմակերպիչ յանձնախումբի՝ Երեսփոխանական Գրասենեակի Մշակութային Յանձնախումբի անդամներուն հետ:



«Արեվիկ» համոյթը Ելոյթի պահուն



Վարդգես եւ Մակի Մահտեսեաններ
շրջապատուած «Արեվիկ» համոյթի անդամներով

Իրենց կեցութեան ընթացքին, անոնք այցելեցին Նիկոսիոյ Ս. Կատուածածին Եկեղեցին եւ Ազգային Առաջնորդարան, իհիղընկալութելով Գերշ. Տեր Վարուժան Արք. Յերկելեանի կողմէ:

«Արեւիկ» համոյթը շրջապտոյտ մը ունեցաւ նաեւ դեպի Այա Նարա, վայելելու համար Միջերկրական ծովու լոգանքը ու ջերմ արեւը:

Հառնաքայի Յայ Ակումբը «Արեւիկ» խումբը պատուեց ճաշկերոյթով մը, որոյ ընթացքին անոնք առիթը ունեցան մօտէն ծանօթանալու Կրտսերներու Եւրոտեսիլին Կիպրոսը Ներկայացնող Եորդոս Եուանիտիսին (Պոյաճեան): Տեղին է յիշել, որ Յայ Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց Եորդոն ու անոր մաղթեց յաջողութիւն:

Մեծ էր Ժողովուրդին խասդավառութիւնը: Մինչեւ օրս մեր փոքրեղը ոգեւորութեամբ կը դիտեն «Արեւիկ»ի տեսահոլովակը: Բարձր էին նաեւ խումբի անդամներուն տրամադրութիւնները, որոնք գոհունակութեամբ ու մեծ տպաւորութեամբ վերադարձան Յայաստան:

Դեկտեմբեր 8ին, «Արեւիկ» առաջին անգամ ըլլալով իր մասնակցութիւնը բերաւ Ռոթերտամի մէջ կայացած Կրտսերներու Եւրոտեսիլին եւ գրաւեց 2-րդ դիոքը: Այս ուրախ առիթով, Պրև. Մահտեսեան շնորհաւորական Երկտող մը ուղղեց խումբի ղեկավար Պրև. Արմեն Տիկանեախն, մաղթելով «Արեւիկ»ին նորանոր նուաճումներ:

Կուրծքի քաղցկեղի կանխարգիլման ձեռնարկ

Երեսփոխանական Գրասենեակի կազմակերպութեամբ Երկրորդ ձեռնարկը տեղի ունեցաւ Կիրակի, 14 Յոկտեմբեր 2007ին, Նիկոսիոյ Hilton Park պանդոկին մէջ: Յոկտեմբեր ամիսը ըլլալով Կուրծքի քաղցկեղի կանխարգիլման եւ նախազգուշութեան նուիրուած ամիս, յարմար նկատեցինք մեր օրիորդներն ու տիկինները հա-

ղորդակից դարձնել այս հիւանդութիւնը դիմագրաւելու միջոցներուն: Օրուան պատգամը փոխանցեց Տոքթ. Ելենի Թեօխարուս, իսկ վիճակագրական արողիւնքներու դասախոսութեամբ ելոյթ ունեցաւ Տիկ. Սթելլա Զիրիացիութեամբ:

Տարեցներու Խորհրդարան

Ինչպէս տեղեկացուցած էինք «Լրատու»ի նախորդ թիւով, Յուլիսին, Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչը Տարեցներու Խորհրդարանի երեսփոխան եւ փոխ-երեսփոխան նշանակած էր յաջորդաբար Տիկ. Անահիտ Եսկիճեանը եւ Տիկ. Էլսի Իւթիւճեանը: Անոնք տքնաջան աշխատանք կը տանին 2008ի առաջին ամիսներուն հանդիպումներ կազմակերպելու մասնագետ անձերու հետ, որոնք մանրամասն տեղեկութիւններ պիտի փոխանցեն թոշակառուներու իրաւունքներուն եւ կառավարական նպաստներուն մասին: Չուգահեռ աշխատանք կը տարուի նաեւ գրքոյկի մը պատրաստութեան գծով, որ պիտի ընդգրկէ թոշակառուները հետաքրքրող Կիպրոսի կառավարութեան տրամադրած քարոյական եւ նիւթական օժանդակութիւնները, բարելաւելու երրորդ տարիքի մեջ եղող անհատներու կեանքի պայմանները:

Խորհրդաժողովի մասնակցութիւն

Պրև. Վարդգէս Մահտեսեան 15-16 Յոկտեմբեր 2007ին կը գտնուեր Պրիւսէլ, մասնակցելու համար Երոպայի Յայ Դատի Յանձնախումբի կազմակերպած 2-րդ յանձնաժողովին: Ան, ընդառաջելով Յայ Դատի Յանձնախումբի հրաւերին, իր ներկայութեամբ, Կիպրահայութեան զօրակցութիւնը յայտնեց, հայ թէ օտար քաղաքական անձնաւորութիւններու, Յայաստանի Պետութեան ներկայացուցիչներու եւ Յայ Եկեղեցիներու պետերու

կողքին, Թուրքիոյ անզիջող քաղաքականութեան դեմ տարուած աշխատանքներուն եւ Հայկական Ցեղասպանութեան միջազգային ճանաչման ապահովումին գծով:



Պրիւսէլ, 15-16 Յունիսմբեր 2007

Կիպրոսի փոքրամասնութիւններու խորհրդաժողով

Կիպրոսի Եւրոպական Համալսարանի (Սախկին Cyprus College) կազմակերպութեամբ, Շաբաթ 24 եւ Կիրակի 25 Նոյեմբերին, տեղի ունեցաւ «Փոքրամասնութիւններ՝ Կիպրոսի մեջ» նիւթով համաժողով մը, մասնակցութեամբ Հայ, Մարոնիթ եւ Լատին համայնքներու ներկայացուցիչներուն, Կիպրացի եւ օտար հիւր-դասախոսներու ինչպէս նաեւ համեստ թիւով ունկնդիրներու ներկայութեամբ:

Կիպրահայութեան անցեալի ու ներկայի ընկերային եւ մշակութային կեանքին մասին պատմական տեղեկութիւններով եւ տուեալներով ելոյթ ունեցաւ Փրոֆ. Ժերար Տետեան, Դոկտ. Սիլվան Փաթի, Կիպրահայ Դոկտ. Սոսի Գասպարեան եւ Դոկտ. Վարդան Օզինեան:



Կիրակի, 25 Նոյեմբերին, կլոր սեղանի ընթացքին, Պրո. Մահտեսեան խօսելով Յայ Յամայնքի դերին մասին, մասնաւորաբար մատնանշեց կարգ մը հիմնական կետեր, որոնց պակասը կը դժուարացնէ Յայ Ներկայացուցիչին արդիւնաւոտ գործունեութիւնը Կառավարական շրջանակներէն ներս: Ան անհրաժեշտ նկատեց Յայկական ամպիոնի մը ստեղծումը

Կիպրական Պետական Յամալսարաններս ու խիստ կարեւոր՝ Կիպրոսի դպրոցական պատմութեան դասագիրքերուն մէջ, Կիպրահայ համայնքին մասին պատմական, մշակութային եւ կրօնական տեղեկութիւններու ներառումը: Իր խօսքի աւարտին, ան շեշտեց սահմանադրական օրենքով սահմանուած կրօնական փոքրամասնութիւն կարգավիճակէն դուրս գալու կարեւորութիւնը եւ փոխարենը որպէս ազգային փոքրամասնութիւն ճանչուիլը, ինչ որ լայնօրէն պիտի նպաստէ Յայ գաղութի իրաւասութիւնները ամրապնդելու աշխատանքին:

Կլոր սեղանի աւարտին տեղի ունեցաւ գաղափարներու փոխանակում, որմէ ետք ներկաները մեծ գոհունակութեամբ բաժնուեցան:

Կիպրոս գտնուելուն առիթով, Ուրբաթ 30 Նոյեմբեր 2007ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Դոկտ. Վարդան Օզինեանին հետ, որ մեծ աշխատակը կը տանի, որպէս Pro Edvcatio միջազգային ֆորումի բանբեր, ի մասնաւորի Մելգոնեան Կրթական Յաստատութեան վերաբացման եւ արեւմտահայերէնի պաշտպանութեան ծիրերէն ներս:

Ընորհաւորական գիրեր

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը 12 Յոկտեմբեր 2007ին, անհատական նամակներով իր եւ Կիպրահայ գաղութի շնորհաւորութիւնները ուղղեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Արտաքին Զարարերութեանց Յանձնախումբի Նախագահ Պրև. Թոմ Լանթոսին եւ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի Գործադիր Տնօրին Պրև. Արամ Համբարեանին, իրեւոց տարած անսակարկ աշխատանքին համար, որուն իբրեւ արդիւնք Հայկական Յեղասպանութիւնը ճանչող թիւ 106-րդ բանաձեւը, պատմական անդրադարձ արձանագրելով որդեգրուեցաւ Ներկայացուելու Ամերիկայի Միացեալ Նահանգներու Քոնկրետին:

Պետական-պաշտօնական մակարդակի հանդիպումներ

Հինգշաբթի, 27 Սեպտեմբեր 2007ին, Պրև. Մահտեան հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Հանրապետութեան Տնտեսութեան Նախարարութեան Ընդհանուր Տնօրին Պրև. Եորդոս Փափաեռդիուի հետ, Ներկայութեամբ ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութեան Պաշտօնեութեան Վարչութեան բաժանմունքի 3-րդ քարտուղար Տիկ. Լիանա Գրիգորեանի եւ Հանրային Ծառայութեանց Գիտական Ուսուցման բաժանմունքի գլխաւոր պատասխանատու Պրև. Գեղամ Սարգսեանի: ՀՀ Նախագահ Ռոպերթ Քոչարեանի Նոյեմբեր 2006 Կիպրոս կատարած այցեն ետք, այս հանդիպումը առաջին քայլն էր Հայաստան-Կիպրոս կապերը զարգացնելու առնչութեամբ:

Ուրբաթ, 5 Յոկտեմբեր 2007ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի մօտ Իրանի հսկամական Հանրապետութեան դեսպան Պրև. Ալի Ռեզա Պիքտելիի հետ: Հանդիպումը ընթացաւ մտերմիկ

մթևոլորտի մը մԵզ, ուր քննարկուեցան Երկար տարիներու Հայաստան-Իրան փոխ-յարաբերութիւնները:

Նոյն օրը կեսօրին, Պրև. Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Աշխատանքային Գրասենեակի եւ Ընկերային Ապահովագրութեան Ընդհանուր Տնօրէն Պրև. Լեանտրոս Նիքոլայիտիսին հետ, Ներկայութեամբ առաջին տեղակալ Պրև. Տիմիթրիս Միխայիլիտիսին: Անոնք իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին օժանդակելու հայազգի անհատներու աշխատանքային արտօնագիրներու դիմումներուն:

Երեքաբթի, 9 Յոկտեմբեր 2007ին, Պրև. Վարդգես Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարար Դոկտ. Խրիստոս Բաթսալիտիսին հետ, Ներքին Գործոց Նախարարութեան Ընդհանուր Տնօրէն Դոկտ. Լազարոս Սավիտիսին Ներկայութեամբ: Պրև. Ներկայացուցիչը նախարարին յանձնեց քաղաքացիութեան եւ կեցութեան դիմումներ ներկայացնողներու երկրորդ ցանկը: Այս հանդիպումին որոշում առնուեցաւ շաբաթական հանդիպումներով հետապնդել քաղաքացիական դիմումներուն կացութիւնը, արագացնելու նպատակով անոնց ընթացքը:

Յինգշաբթի, 11 Յոկտեմբեր 2007ին, Պոլսոյ Կետիկ Փաշա շրջանի Հայ Ալետարանական Եկեղեցւոյ հովիւ Վերապատուելի Գրիգոր Աղապալօղլու, որ Կիպրոս կը գտնուեր դասախոսութիւններ տալու Նիկոսիոյ, Լառնացայի եւ Լիմասոլի մԵզ, ընկերակցութեամբ Պրև. Հրայր ճեպեճեանի, ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Պրև. Վարդգես Մահտեսեանին հետ:

Կիրակի, 11 Նոյեմբեր 2007ին, Պրև. Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի Ատենապետ Պրև. Պերճ Սեղրակեանին հետ, Ներկա-

յութեամբ Պրն. Պեսոն Սեւանի: Յանդիպումին առանցքը կազմեցին Կիպրահայութիւնը եւ համայն հայութիւնը յուգող հարցեր:

Երկուշաբթի, 19 Նոյեմբեր 2007ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Այս Տոմետիոսի շըրջանի քաղաքապետ Դոկտ. Անտրեաս Յատճիլոհուիին հետ: Յանդիպումին աւարտին, քաղաքապետը պատրաստակամութիւն յայտնեց պարբերաբար հիգալու Այս Տոմետիոս շրջանին մէջ գտնուող Յայկական գերեզմանատան մաքրութիւնը:



Նոյն օրը, Պրն. Մահտեսեան, կեսօրուան ճաշի հիւրը եղաւ Փորթուկալի Դեսպան Պրն. Անթոնիօ Տը Քարվալիոյի, վերջինիս հրաւերով: Անոնք մտերմիկ գրոյց ունեցան Կիպրահայ համայնքի գործունեութեան մասին:

Ուրբաթ, 23 Նոյեմբեր 2007ին, Պրն. Մահտեսեան տե-

սակցութիւն մը ունեցաւ Հոդի Զարգացման Յիմնարկի (ԿՕԱԳ) տնօրէն Պրն. Սթելիս Մարքիտիսին հետ, քննելու համար բնակարանային դիմումներու կացութիւնը: Այս հանդիպումնեն ի յայտ եկաւ թէ դիմումները կը նախատեսեն 3-4 տարի սպասում, իիմնարկի ծրագիրներու շինութեան ուշացումին պատճառով:

Չորեքշաբթի, 28 Նոյեմբեր 2007ին, Պետական Ներկայացուցիչին բնակարանը ճաշի հրաւիրուեցաւ Հայաստանի Յանրապետութեան Իրաքի նախկին դեսպան Պրն. Եուրա Պապախանեանը, որ Կիպրոս կը գտնուեր Ներկայացնելու համար Հայաստանի Յանրապետութիւնը Երոպական Դրացնութեանց Զաղաքականութիւն (European Neighbourhood Policy) խորհրդաժողովին:

«Լիտրա Բալա»ի

Հայկական գերեզմանատան վերականգնում

Կիպրոսի կառավարութեան պատկան անձնաւորութիւններուն մօտ աւելի քան մեկ տարուայ հետապնդումնեն ետք, Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան Ուրբաթ, 19 Հոկտեմբեր 2007ին բերանացի տեղեակ պահուեցաւ, թէ հայկական գերեզմանատան վերակառուցման աշխատանքներուն համար կառավարութիւնը որոշած է օժանդակել յատկացնելով 90,000 Կիպրական Ոսկի: Ներքին Գործոց Նախարարութենեն ստացուած 12 Նոյեմբեր 2007 թուակիր նամակը, պաշտօնապէս կը հաստատէր կառավարութեան իշխանական օժանդակութիւնը: Պրն. Մահտեսեան Կիպրոսի Կառավարութեան իր խորին երախտագիտութիւնը յայտնելով, վստահեցուց թէ 2008ին Յայ Եկեղեցին ու համայնքը ամեն ջանք ի գործ պիտի դնեն, վերանորոգելու եւ պատմական ու ճարտարագիտական յուշահամալիրի մը վերածելու այս գերեզմանատունը:

ԶԵՂՆԱՐԿՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 28 Սեպտեմբեր 2007ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնութեցաւ Մարոնիթ համայնքի կազմակերպութեամբ հաւաքի մը, ուր ան խօսք առնելով, ընդգծեց Եւրոպական Միութեան Խորհրդատու Մարմինի Փոքրամասնութիւններու Ազգային Դիմագիծի Պահպանութեան գծով տարուած աշխատանքներուն կարեւորութիւնը, միեւնոյն ժամանակ մատնանշելով առնուած որոշումները գործադրութեան դրուելու վարչամեքենային դանդաղ ընթացքը:

Կիրակի, 30 Սեպտեմբեր 2007ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ ներկայ գտնութեցան Լիմասոլի Ս. Գեորգ Եկեղեցւոյ անուանակոչութեան արարողութեան:

Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան պաշտօնապես հրավիրուելով, Շաբաթ 15 Դեկտեմբեր 2007ի երեկոյեան, ներկայ գտնութեցան Նոր Սերունդ Մշակութային Միութեան ճաշկերոյթ-պարահանդեսին:

Ստացուած նամակ

Օգոստոս 20ին, Մելգոննեանի Խորհրդատու Մարմնի Կտեսապետ Պրև. Սմբատ Տէվլեթեանի ստորագրութեամբ նամակ մը յղութեցաւ Պրև. Մահտեսեանին, որուն պատասխանը դրկութեցաւ 24 Հոկտեմբեր 2007ին:

Առ ի գիտութիւն մեր ժողովուրդին, երկու նամակներն ալ յանձնութեցան Կիպրահայ թերթերուն, անոնց ընդգրուկած կարեւոր բովանդակութեան համար եւ Քայ Պետական Ներկայացուցիչին թափանցիկ ծեւով աշխատելու սկզբունքին: «Արձագանգ» ամսաթերթը ընդառաջեց տպելու գոյգ նամակները, սակայն «Ազատ Զայն»ը, անհասկալի պատճառաբանութիւններով մերժեց հրապարակել նամակները, հակառակ իր գործածած «Յանու Ազատ Մտքի եւ Ազատ Խօսքի» նշանաբանին:

Կիպրահայ համայնքի կայքեցի

Նոյեմբերին, շուրջ մեկ տարուայ խորհրդակցութիւն-ներին ետք, Կիպրոսի կառավարութեան կողմէ վաւերացուեցաւ կրօնական փոքրամասնութիւններուն կայքեցի դրութեան հաստատման եւ նիւթապէս օժանդակելու հարցը: Պին. Մահիտեսեան Կիպրահայ Համայնքի կայքեցի պատասխանատու նշանակեց Տոքթ. Նազարեթ Արմենակեանը, որ արհեստավարժի կարողութիւններով եւ արդիական ոճով կրցաւ տպաւորիչ կայքեց մը պատրաստել: Այս կայքեցին պաշտօնական բացումը պիտի կատարուի Հայ Համայնքի Ս. Ծնունդի օրը, Կիրակի, 6 Յունուար 2008ին, որ ուղղակի պիտի ծայնասփոք Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ մատուցուելիք ժամերգութիւնն ու Ս. Պատարագը:

Կայքեցը, երիտասարդութիւնը ներգրաւելու համար, պիտի ընդգրկէ խաղեր ու մրցանքներ, ինչպէս նաև մշակութային, քաղաքական լուրեր եւ պատմագրական տեղեկութիւններ Կիպրահայութեան մասին: Յուն տեղ պիտի գտնեն նաև Պետական Ներկայացուցիչի գործունեութիւնն ու «Լրատու»ն: Քիմսական լեզուն պիտի ըլլայ Անգլերէնը, որուն պիտի յաջորդեն Յունարէն եւ Հայերէն լեզուներով բաժիններ:

Նշենք, որ Վերոյիշեալ ծրագիրին համար կառավարութիւնը օժանդակեց 5,000 Կիպրական Ոսկիով:



Ծանօթանակը Կիպրոսի Հանրապետութեան ՕրԵնքներուն

Երկարամեայ Կեցութեան Արտօնագիր (Long-Term Residence)

Մօտաւորապէս 10 ամսուայ ուշացումն ետք, Երկու-
շաբթի, 19 Նոյեմբեր 2007ին, Ներքին Գործոց Նախարա-
րութեան Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժան-
մունքեն ստացանք Երկարամեայ Կեցութեան Արտօնա-
գիրի (Long-Term Residence) պայմաններն ու դիմումնա-
գիրները:

Ամփոփ կետերու մեջ, ստորեւ կը ներկայացնենք հիմ-
նական նախապայմանները:

Դիմում կրնան ներկայացնել երրորդ երկրի պատկա-
նող այն քաղաքացիները, որոնք

1. Օրինաւոր բնակութիւն հաստատած են Կիպրոսի
Հանրապետութեան օրինական բաժինին մեջ վերջին
հինգ (5) յաջորդական տարիներուն՝ առանց ընդհատումի

2. Ունին ի զօրու կեցութեան արտօնագիր

3. Ունին 2 տարուայ ի զօրու անցագիր

4. Կրցած են ապահովել յաջորդ տասնըութ (18) ամիս-
ներու աշխատանքային համաձայնագիր (Employment
Contract)

5. Վերջին հինգ (5) տարիներու ընթացքին վճարած են
Ընկերային Ապահովագրութեան (Social Insurance) ամ-
սավճարներ

6. Լրացուցած են վերջին հինգ (5) տարիներու Եկա-

ՄՈՒՏԻ ՏՈՒՐՔԻ (Income Tax) ՀԱՍՏԱՏԱԳԻՐՆԵՐ

7. Կրնան ներկայացնել դրամատան հաշուեցոյց (Bank Statement)

8. Ուսին Առողջապահական Ապահովագրութեան համաձայնագիր (Health Insurance)

9. Կրնան ոստիկանութենէն ապահովել Բարի Վարուց վկայագիր (Police Clearance).

Չեն կրնար դիմում կատարել բոլոր անոնք, որոնք ունին հետեւեալ կարգավիճակները.-

- Քաղաքական Ապաստանեալ
- Անհատներ՝ յատուկ Պաշտպանութեան կարգավիճակով
- Ուսանողներ

Դիմումները պիտի յանձննուին Ներգաղթի Եւ Օտարահպատակներու Բաժանմունք վճարելով 250.00 Կ.Ո կանխիկ (cash), իսկ ընդունման կամ մերժումի պարագային, դիմողները գրաւոր տեղեակ պիտի պահուին 4-6 ամսուան ընթացքին: Այս դիմումնագիրները, որոնք ամբողջական փաստաթղթերով չեն ներկայացուիր, տեղւոյն վրայ ետ պիտի վերադարձնուին:

Եւրո Դրամանիշի Որդեգրում 01.01.2008

Ինչպէս արդին տեղեակ եք, Կիպրոսի խորհրդարանը 15 Մարտ 2007ին վաւերացուց Եւրո դրամանիշի որդեգրման օրէնքը, որ 2008 թուականն սկսեալ պիտի փոխարինէ Կիպրական Ոսկին:

10 Յուլիս 2007ին, Եւրոպական Միութեան իշխանութիւնները անփոփոխ փոխանակումի սակ հաստատեցին՝ **€1 = £ 0.585274**, որ ուժ պիտի ստանայ 1 Յունուար 2008ին սկսեալ:

Ստորեւ կը ներկայացնենք Կիպրական Ոսկիի փոխարժեքները Եւրոյով եւ Եւրոյի փոխարժեքները Կիպրական Ոսկիով.-

£ 1.00	€ 1.71	€ 5.00	£ 2.93
£ 5.00	€ 8.54	€ 10.00	£ 5.85
£ 10.00	€ 17.09	€ 20.00	£ 11.71
£ 20.00	€ 34.17	€ 50.00	£ 29.26
		€ 100.00	£ 58.53
		€ 200.00	£ 117.05
		€ 500.00	£ 292.64

Կիպրական Ոսկին եւ Եւրօն գուգահեռաբար շրջանառութեան մէջ պիտի ըլլան 1 Յունուար 2008-ին մինչեւ 31 Յունուար 2008: Յունուար ամսուան ընթացքին, Կիպրական Ոսկիով կանխիկ առեւտուր կատարելը հնարաւոր է, սակայն մացորդը միայն Եւրոյով պիտի վերադարձուի սպառողին: Այս ձեւով Կիպրական Ոսկին աստիճանաբար պիտի վերցուի շուկային:

Իսկ 1 Փետրուար 2008-ին սկսեալ, Կիպրական Ոսկիին կանխիկ գործածութիւնը օրինական չէ Կիպրոսի մէջ:

Փոխգիրի (cheque) գործածութիւնը Կիպրական Ոսկիով ընդունելի չէ 1 Յունուար 2008-ին սկսեալ, փոխարեն՝ Եւրօ փոխգիրի գործածութիւնը պայման է:

Դրամատուները, առանց յաւելեալ ծախսի, 1 Յունուար 2008-ին մինչեւ 30 Յունիս 2008 Կիպրական Ոսկին պիտի փոխանակեն Եւրոյով: Վերոյիշեալ թուականեն ետք, փոխանակումը արտօնուած պիտի ըլլայ միայն Կեդրոնական Դրամատան միջոցով: Նոյնպէս բոլոր դրամատուները 1 Յունուար 2008-ին սկսեալ, Կիպրական Ոսկիով եղած հաշիւները (accounts) ինքնաբերաբար պիտի փոխարինեն Եւրօ հաշիւի թիւերով, առանց յաւելեալ ծախսի:

**Վարդգես Եւ Մակի
Մահտեսեաններ
Ամանորի Եւ Ս. Ծնունդի
զոյգ տօներուն առիթով
սրտանց կը շնորհաւորեն
Կիպրահայութիւնը, մաղթելով
առողջութիւն Եւ երջանկութիւն:**

Թող 2008 թուականը մեր
Մայր Հայրենիքին համար ըլլայ
բարգաւաճումի, յարատել վերելքի
Եւ ազգային հիմնահարցերու բարւոք
լուծումի տարի մը:

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42
Ել. Հասցե office@armenianmp.com
Ոստայնեց՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42
Ել. Հասցե vmahdessian@parliament.cy